

«ՋԻ&ԷԼ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ղեկավարության հայտարարությունը 2020 ֆինանսական
հաշվետվությունների վերաբերյալ

«ՋԻ&ԷԼ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ում հաշվապահական հաշվառումը վարվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30 նոյեմբերի 2011 թվականի թիվ 322-Ն որոշմամբ հաստատված Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 26 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 292-Ն և ՀՀ ֆինանսների նախարարի 19 հունվարի 2018 թվականի թիվ 14-Ն համատեղ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30 նոյեմբերի 2011 թվականի թիվ 322-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների և լրացումների, ներդրումային ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխան:

Ընկերության 2020թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները կազմված են համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվային ակտերի, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ), հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից ընդունված ստանդարտների և դրանց մեկնաբանությունների:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվել և ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի կողմից հաստատված «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլան»-ի և «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգ»-ի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերի, հաշվապահական հաշվառման ստանդարտներին և գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերին համապատասխան:

«ՋԻ&ԷԼ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ ղեկավարությունը պատասխանատվություն է կրում՝

- 1) Ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, հատկապես.
- ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, իրավասու մարմնի կողմից
- հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,

բ. հիմնավորված գնահատումներ, հաշվարկներ կատարելու համար,
գ. ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների
պահանջների պահպանման, իսկ Ֆինանսական հաշվետվությունների
միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական
հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների
բացահայտման համար,

դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
ե. ընկերության գործունեության անընդհատության հիման վրա ֆինանսական
հաշվետվությունները պատրաստելու համար, ընդ որում ընկերության
ղեկավարությունը մտադիր չէ կամ պատճառ չունի դիտարկելու ընկերությունը
լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու հավանականությունը:

2) ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար
ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության
օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային
ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն
համակարգի ներդրման համար,

3) ընկերության ակտիվների պահպանության, խարդախությունների և
անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր
իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:



[Signature]
[Signature]

Գ. Նալբանդյան

Ա. Ասատրյան